Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԵԿՏՈՐ

Թիվ 2-1193 16.11.2015 թ.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1813-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 44-րդ կետի 16-րդ ենթակետով՝

1. Համալսարանի Պրակտիկայի վարչությունը վերանվանել Պրակտիկայի կենտրոն:

2. Համալսարանի ռեկտորի 2015 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 2-1037 հրամանով հաստատված Համալսարանի պրակտիկայի վարչության կանոնադրության մեջ <<Պրակտիկայի վարչություն>> բառերը փոխարինել <<Պրակտիկայի կենտրոն>> բառերով:

3. Համալսարանի Իրավաբանական վարչությունը վերանվանել Իրավաբանական կենտրոն:

4. Համալսարանի ռեկտորի 2014 թվականի մայիսի 16-ի թիվ 2-558 հրամանով հաստատված Համալսարանի իրավաբանական վարչության կանոնադրության մեջ <<Իրավաբանական վարչություն>> բառերը փոխարինել <<Իրավաբանական կենտրոն>> բառերով:

5.Պրակտիկայի և իրավաբանական վարչությունների պետերի հաստիքներն վերանվանել կենտրոնի ղեկավար:

6. Հանձնարարել՝

1) Ֆինանսական ծրագրավորման և վիճակագրական վարչության պետ Քնարիկ Միրզախանյանին՝ կատարել սույն հրամանից բխող հաստիքացուցակի փոփոխություն.

2) Անձնակազմի հաշվառման բաժնի պետ Անժելա Թորոսյանին՝ կատարել սույն հրամանից բխող անհրաժեշտ գործողությունները:

Ռ. Միրզախանյան

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ